

ՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ «ԲԱԶՄԱՎԷՊ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷԶԵՐՈՒՄ

«Բազմավեպ» հանդեսի 1898 թ. հուլիս ամսվա համարում երիտասարդ գիտնական Հր. Աճառյանն անդրադառնում է Ֆրանսիայում և Գերմանիայում գործող այն կրթօջախներին, որոնցում ի թիվս այլ լեզուների դասավանդվում էր նաև հայերեն, և դա կարելի էր համարել գովելի իրողություն, եթե ի հայտ չգային մի շարք անընդունելի հանգամանքներ, որոնց լուսաբանմանն էլ նվիրված է այս հոդվածը: Ինչպես երևում է շարադրանքից, «Բազմավեպ» հանդեսի այս հոդվածին նախորդել էր լրատվություն այն մասին, որ Ֆրանսիայում և Գերմանիայում կան կրթօջախներ, ուր հայերեն են դասավանդում: Այդ առիթով երիտասարդ լեզվաբան Հր.Աճառյանը ներկայացնում է իր տեսակետը նմանատիպ կրթօջախներում ուսուցման գործնական նպատակների և արդյունավետության մասին: Անդրադառնալով այն իրողությանը, որ հայերիս համար մեր լեզուն օտարներին ճանաչելի դարձնելու ամեն փորձ ուրախալի և գովելի փաստ է, երիտասարդ հայագետը հարկ է համարում այդ հարցում առկա շատ ակնառու մի բացթողում ներկայացնել՝ հակադրելով Փարիզում գործող երկու կրթօջախներում հայերենի դասավանդման հարցում առկա տարբեր մեթոդները՝ հընթացս մեկնաբանելով նաև ուսուցման որակին և նպատակներին առնչվող մի շարք խնդիրներ: Նա գրում է.

«Բազմավեպի ընթերցողը ուրախութեամբ կարդացին այն փոքրիկ նորայուրը, զոր գրեթէ բոլոր հայ թերթերն արտատպեցին, և որ կը յայտնէր, թէ Պարիզի Բարձր Ուսմանց վարժարանին մէջ պր. Մէյյէ սկսած է հայերէնի Չայնաբանութեան դասեր աւանդել: Փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու համար ընթերցողացս, ներկայիս կը փափաքիմ՝ աւելի ընդարձակ տեղեկութիւն տալ ո՛չ միայն պր. Մէյյէի և իր դասաւանդութեան, այլ և պր. Կարրիերի և առհասարակ հայերէնի ուսման և ուսուցման եղանակին վրայ յԱրեւմուտս: Թերեւս այսու յուսախաբութիւն պիտի առթեմ ընթերցողացս, սակայն չպիտի կարենայի լռել և ճշմարտութիւնը թաքուցանել, պիտի խօսիմ՝ իբրև փորձառու և ականատես վկայ »¹:

Անձամբ մասնակցելով այդ դասերին՝ Աճառյանը հարկ է համարում ներկայացնել իր ստացած տպավորությունը նմանատիպ դասընթացների արդյունավետության մասին՝ քննելով ուսուցման եղանակներն ու մեթոդները: Այդ առումով նա համեմատում է Փարիզում գործող հաստատություններից երկուսը՝ Սորբոնի Բարձր ուսմանց վարժարանը, ուր հայերեն էր դասավանդում մեծ հայագետ և հայասեր Անտուան Մէյեն և երկրորդը՝ Արևելյան լեզուների վարժարանը, ուր հայերենի ուսուցումը զուտ ձևական էր, դասընթացը վարում էր առարկայի մասին աղոտ պատկերացում ունեցող մի ուսուցիչ՝ Կարրիեր անունով: Լինելով այդ վարժարանում և կատարելով դասալսումներ՝ Աճառյանը բազմաթիվ թերություններ է հայտնաբերել:

¹ Տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայոց լեզվի ուսուցման եղանակը յարեւմուտս (ի Գաղղիա և ի Գերմանիա)*, Բազմավեպ, 1898, հուլիս., էջ 317:

Այսպես՝ Սորբոնի Բարձր ուսմանց վարժարանում ուսանողներին դասավանդվում էր պատմություն և բանասիրություն, լեզվաբանություն և հատկապես՝ հին լեզուներ՝ հունարեն, լատիներեն, սանսկրիտ, հայերեն (գրաբար), պահլավերեն, ասորերեն, ուսումնասիրության առարկա էին նաև եգիպտական և ասորական քնեռագրերը՝ նպատակ ունենալով ընդլայնելու 19-րդ դարավերջին մարդկային քաղաքակրթության պատմության հանդեպ եղած հետաքրքրությունների շրջանակը և գիտական հիմքերի վրա դնելու եղած ուսումնասիրությունները: Այլ խոսքով՝ Բարձր ուսմանց վարժարանն այն միջավայրն էր, ուր միանգամայն տեղին ու պատճառաբանված է հայերենի կամ գրաբար հայերենի ուսումնասիրությունը: Այդ առիթով Աճառյանն իր հարգանքի տուրքն է մատուցում պրպտուն մտքի տեր և պատասխանատվության մեծ զգացումով մեր հին ու գեղեցիկ լեզվի դասավանդումը ստանձնած գիտնականին՝ Անտուան Մեյեին: Նրա լսարանում հայերեն ուսումնասիրողների թիվը մեծ չէր, սակայն բարձրակարգ էր ուսուցման որակն ու լավ մշակված մեթոդը:

Բոլորովին այլ կարգի կրթօջախ էր Արևելյան լեզուների վարժարանը, որը Փարիզում բացվել էր վաճառականության և դիվանագիտության շահերին ծառայելու նպատակամղումով: Արևելյան լեզուների վարժարանում դասավանդում էին այն երկրների լեզուները, որոնց հետ Ֆրանսիան դիվանագիտական և առևտրային հարաբերություններ ու շահեր ունի: Օրինակ, ասենք, արաբերենը այդ վարժարանում ուսումնասիրվում է խորությամբ՝ ներառելով ոչ միայն գրական արաբերենը, այլ նաև Ալժիրի ժողովրդական խոսուն արաբերենը, իսկ դա կարող էր նպաստել այդ երկրներում դիվանագիտական ծառայություն ստանձնած գործիչներին կամ առևտրական գործակալներին թարգմանություններ մատուցելու հարցը կարգավորելու խնդրին: Նույնը կարելի է ասել թուրքերենի, ռուսերենի, չինարենի և այլ կենդանի լեզուների ուսուցման՝ միանգամայն պարզ ու հասկանալի նպատակների մասին: Այդ համատեքստում, սակայն, անհասկանալի և աննպատակ է գրաբար հայերենն այդ լեզուների շարքում ընդգրկելը, ինչի մասին իր տարակուսանքն է հայտնում Հ.Աճառյանը: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է հին հայերենին, որի ուսումնասիրության ամենաբնական, արժանավայել տեղը երիտասարդ լեզվաբանը համարում է Բարձր ուսմանց վարժարանը՝ համապատիվ իր քույր լեզուների՝ հին հունարենի, սանսկրիտի, լատիներենի կողքին: Իսկ եթե հարկ կար Արևելքի լեզուների շարքում ներառել նաև հայերենը (անկախ դիվանագիտական հարաբերություններ չունենալու հանգամանքից), ապա դա, անշուշտ, պիտի լիներ հայերեն աշխարհաբարը:

Լինելով այդ վարժարանում և կատարելով դասալսումներ՝ Աճառյանը բազմաթիվ թերություններ է հայտնաբերել: Նախ, կարևորելով դասավանդող ուսուցչի դերն ու գիտելիքները, Աճառյանը բացասական կարծիք է հայտնում հայերեն դասավանդող ուսուցչի՝ Կարրիերի մասին, որին միայն շատ մեծ վերապահումով կարելի է հայագետ անվանել: Իսկ այդպիսի տպավորություն Կարրիերն իր շրջապատում թողել է մեր պատմահայր Խորենացու դեմ գրված իր

հողվածներով: Աճառյանի տպավորությամբ՝ նա մի գեր, արտաքուստ համակրելի և զվարճախոս մեկն էր և կարող էր նաև համակրանքի արժանանալ, եթե այդքան նկատելի չլինեք այն փաստը, թե գործ ունենք թեկուզ և բանասերի, բայց ոչ երբեք՝ հայասերի հետ: Դա երևում է նաև Խորենացու դեմ գրված հողվածներից: Իսկ թե ինչ իրավունքով էր հայերեն դասավանդում և որտեղ էր հայերեն սովորել, Աճառյանին զադտնիքի կարգով հայտնել էր նույն վարժարանի մի այլ ուսուցիչ: Նա պատմել էր, որ Գերմանիայում ուսանելիս Կարրիերին դպրոցից հեռացնելու սպառնալիքով պարտադրել էր նաև հայերենի դասերի մասնակցել: Նա տհաճությամբ ենթարկվել է այդ պարտադրանքին, թեև հետագայում դա օգնել է դասեր ունենալու վերոհիշյալ վարժարանում: Ընդ որում՝ 20 աշակերտ ունենալն արդեն իսկ մեծ հաջողություն էր: Իսկ աշակերտների մեծ թիվը պարզաբանանելիս Աճառյանը բավական կտրուկ մի վարկած է առաջ քաշում: Նա գրում է.

«Կարրիերի աշակերտաց թիվը փոփոխական է, բայց մինչև 20 կը բարձրանայ: Այժմ պիտի հարցնեն յարգոյ ընթերցողքս, թէ ու՞ր կերթան ուրեմն այսչափ ուսանողները՝ որ ամէն տարի վարժարանը կավարտեն: Պատասխանս յուսահատական է: Բոլոր այն պարոնները, որ կաշակերտին հայերէնի, պարզապէս դասալիքներ են. Գաղղիական կառավարութիւնը զինուորական ծառայութենէ ազատ կը կացուցանէ բոլոր այն երիտասարդները, որ վարժարանի մը առաջին քննութեան յաջողած և օրինաւոր աշակերտաց կարգը դասուած են: Պարիզ կան բազմաթիւ համալսարանք, ինչպէս՝ բժշկական, իրաւագիտական, գեղարուեստական և այլն: Բայց ասոնց մուտքը դժուար է, որովհետեւ կը պահանջուի մտից քննութիւն և մրցում, իսկ Արեւ. Լեզուաց վարժարանը չունի այսպիսի բան. Մեր պարոն դասալիքներուն աւելի դիւրին է անշուշտ առանց քննութեան մտնել այստեղ, մի տարի աշխատել, ամէն ջանք ի գործ դնելով քննութեան յաջողիլ և յաջորդ տարի թողուլ հեռանալ վարժարանէն և միանգամայն զինուորական ծառայութենէ: Այնուհետեւ իբր երազ կը մնան այն միամեայ դասերը, հայերէն բառերը, Խորենացին և այլն և այլն: Ահաւասիկ մեր փոքրիկ հայագէտները»²:

Բնականաբար, հակառակ իր կամքի՝ իրեն պարտադրված առարկան մի կերպ դասավանդող ուսուցչին չէր հաջողվում հայոց լեզու սովորելու և յուրացնելու ցանկություն առաջացնել իրեն վստահված լսարանում: Նրա դասից ստացած տպավորությունն էլ բացասական էր, իհարկե: Առաջին բանը, որ դուր չի եկել Աճառյանին, տնային հանձնարարությունը ոչ թե տեսրում, այլ փոքրիկ թղթակտորների վրա ներկայացնելն էր: Այլ կերպ ասած՝ անլուրջ և անպատասխանատու վերաբերմունք դասավանդվող առարկայի հանդեպ: Զարմանալի չէ, որ թղթի կտորների վրա գրվածը ամենաբարբարոս արտասանությամբ կարդալուց հետո աշակերտները դասի ավարտին դրանք ուղղակի աղբամանն էին նետում: Այդպիսի անլուրջ վերաբերմունքի հետևանքով

² Տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայոց լեզվի ուսուցման եղանակը յարեւմուտս (ի Գաղղիա և ի Գերմանիա)*, Բազմավէպ., 1898, հուլիս., էջ 319:

ուսուցանվող առարկան չէր ընկալվում: Չկար ուսուցման որոշակի մեթոդ: Ուսուցիչն ինքն էլ չէր տիրապետում լեզվին և հաճախ չէր կարողանում պատշաճ կերպով պատասխանել աշակերտների հարցերին: Այդ առիթով Աճառյանը ներկայացնում է մի ծիծաղելի դրվագ իր դասալսումից: Այդ օրը բոլոր տրտնջում էին, թե ոչ մի բառարանում չեն գտել *առ դրան խորանին* բառակապակցության մեջ առկա *դրան* բառը: Ասում էին՝ բառարանում գտել են *դրամ*, բայց ոչ՝ *դրան*: Այդ բառն անձանոթ էր նաև ուսուցչին, և նա ճարահատյալ դիմում է Աճառյանի օգնությանը, որն էլ բացատրում է, թե դա *դուռն* բառի սեռականն է և չէր կարող *դրան* ձևով հայտնվել բառարանում:

Դասալսումները ի հայտ բերեցին մի շարք վրիպումներ և առարկայի չիմացությունից եկող սխալներ: Սակայն դա բոլորովին չէր շփոթեցնում ինքնավստահ ուսուցչին: Բայց ինչու՞ ինքնավստահ չլինեք, եթե բժշկական համալսարանի փարիզաբնակ մի ուսանող Կարրիերի հայերենի իմացության մասին ծիծաղելի մի համեմատություն էր արել, թե նա «*գրաբար հայերեն կը գրէ և կը խօսի ճիշտ այնպէս, ինչպէս Ս.Սահակ կամ Ս.Մեսրոբ*»: Աճառյանի կարծիքով՝ հայերենի կիսագրագետ ու անճարակ ուսուցչին հայ մեծերի հետ համեմատելը *նույնն է «թե համեմատես աղը շաքարի հետ»*:

Այդ հաստատությունում հայերենի ուսուցումը հազիվ թե կարելի էր ոգևորիչ փաստ համարել՝ ի տարբերություն մյուս՝ Սորբոնի Բարձր ուսմանց վարժարանում Անտուան Մեյեի կողմից հմտորեն մշակած մեթոդով իրականացվող գրաբար հայերենի դասընթացի: Առիթն օգտագործելով՝ Հր. Աճառյանը պատշաճ կերպով գնահատում և գովաբանում է լեզվաբանական լուրջ ուսումնասիրությամբ շնորհակալ աշխատանք կատարող Անտուան Մեյեին՝ նրան ներկայացնելով որպես լեզվաբանությանը անմնացորդ նվիրված երեսնամյա երիտասարդ լեզվաբանի՝ «*հմուտ հնդերոպական բոլոր մայր լեզուաց, և այս իսկ նպատակաւ ուսած է նաեւ հայերէնը, զոր կատարելագործելու համար անցած էր Կովկաս, ուր ժամանակ մը հայերէն խօսած է, տեսած է Էջմիածին, Աշտարակ, բարձրացած է Արագած լեռը, ծանօթ է մեր աշխարհիկ գրական բարբառներուն և կը կարդայ հայերէն թերթ և ուրիշ լեզուաբանական աշխատութիւններ*»³:

Բարձր ուսմանց վարժարանում Մեյեի՝ հայերենի դասընթացի հաճախող ուսանողները սակավաթիվ էին, բայց, ինչպես Աճառյանն է նշում, դասալիքներ չէին: Մեյեն կարողանում էր խանդավառել իր ուսանողներին մեր հին ու գեղեցիկ լեզուն ճանաչելու և սիրելու գաղափարով: Բնական է, որ նրա ուսանողներն էլ ձգտում էին ըստ ամենայնի յուրացնել լեզուն՝ հետագայում գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Այդ առիթով Աճառյանը նշում է հայ ազգագրությամբ զբաղվող Գալտիեի անունը, որը մտադիր էր զբաղվել հայ ժողովրդական հեքիաթներով ու առածներով: Մեյեի դասավանդման մեթոդի ամենամեծ արժանիքներից մեկն էլ բանավեճերի և քննարկումների հենքի վրա խարսխվող գիտելիքների հաղորդումն էր:

³ Տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայոց լեզվի ուսուցման եղանակը յարեւմուտս (ի Գաղղիա և ի Գերմանիա)*, Բազմավեպ., 1898, հուլիս., էջ 320:

Հայերենի ուսուցումը Ֆրանսիայի վերոհիշյալ կրթօջախներում քննելուց հետո Աճառյանը հարկ է համարում ներկայացնել նաև լեզվաբանության դասական երկիր համարվող Գերմանիայում հայերենի ուսումնասիրությանն առնչվող խնդիրները: Բանն այն է, որ Գերմանիայում ևս մասնագիտացում ընտրելիս հայերենին այնքան կարևորություն չի տրվում, ինչքան դասական այլ լեզուներին: Ինչպես նշում է Աճառյանը, այստեղ էլ ուսանողները նախընտրում են զբաղվել այն լեզուներով, որոնք ապագայում կնպաստեն եկամտաբեր պաշտոն ապահովելուն: Սակայն հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությամբ խանդավառված գիտական շրջանակներում արժևորվում էր նաև հայագիտությունը: Հր. Աճառյանը առանձնահատուկ ջերմությամբ է խոսում Ստրասբուրգի համալսարանում հայերեն դասավանդող մեծ գիտնական Հյուբշմանի մասին:

Այս առիթով Աճառյանը տեղեկացնում է, որ «Բազմավեպ» հանդեսի 1898 թ. ապրիլ ամսվա համարում ուսուցչապետ Մեյեն Հյուբշմանին նվիրված քննադատական ընտիր հոդված էր գրել՝ «աննախանձ հոգով արժևորելով» այդ մեծ լեզվաբանին: Աճառյանը նույնպես հայերենի համեմատական քերականության վեցամսյա դասընթաց է անցել Հյուբշմանի լսարանում: Ընդ որում՝ ընդամենը 2 հայ ուսանող կար՝ մեկը Աճառյանն էր և մյուսը Էջմիածնի վանքի միաբան եզնիկ վարդապետը: Հյուբշմանը միշտ ցավով է խոսել, որ հատուկենտ հայ ուսանողներ են գալիս համեմատական լեզվաբանության բնագավառում մասնագիտանալու: Աճառյանը վկայակոչում է այդ առիթով մեծ հայագետի՝ գանգատի նմանվող դիտողությունը. *«Եվրոպացիները իրենց չափով և կարողությամբ կաշխատին հայերենի ուսումը հետզհետե՝ յառաջացնելու և անոր դժուարին խնդիրները լուծելու համար. Լա՛յն է այս դաշտը և ցարդ գրեթե բոլորովին անմշակ. գիտունին իւրաքանչիւր քայլին կը բացուի աշխատութեան ընդարձակ նիւթ. Ընելիք շատ բան կայ, որոնց մենք՝ եվրոպացիներս, անկարող ենք: Հայերը պիտի աշխատին, և սակայն Հայոց մէջ եւս որչափ ցանցառ է լեզուաբանութեամբ զբաղողներու թիւը»⁴:*

Աճառյանը ցավով եզրակացնում է՝ իրավունք ունի.

Jemma Barnasyan - RA NAS Language Institute

A REFERENCE TO ARMENIAN LANGUAGE TEACHING PROBLEMS ON THE PAGES OF THE PERIODICAL “BAZMAVEP”

In the edition of July 1898 of the journal “Bazmavep”, the young scientist H. Acharyan refers to those educational institutions in France and Germany, which taught also Armenian language. Personally participating in the Armenian lessons, Acharyan believes it is necessary to present his

⁴ Տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայոց լեզվի ուսուցման եղանակը յարեւմուտս (ի Գաղղիա և ի Գերմանիա)*, Բազմավեպ, 1898, հուլիս., էջ 321:

impressions of the effectiveness of such courses by examining the purpose and methods of teaching. In this regard, he compares two of the Parisian institutions – first, College of Sorbonne where Antoine Meillet, the well-known armenologist and greatest amateur of Armenian people, was giving Armenian lessons, and second, the Special School of Oriental Languages where the Armenian language was just formally taught by someone named Carriere with a very poor knowledge of Armenian. Visiting that special school and observing his lessons, Acharyan found a great number of mistakes. After examining the problems of Armenian language teaching in the aforementioned institutions, Acharyan finds it necessary to present also the problems of teaching Armenian language in Germany as a classical country of language study, thus paying tribute to the great scientist Heinrich Hübschmann who was teaching Armenian in the University of Strasbourg.

Джемма Барнасян - Институт языка НАН РА

ССЫЛКА НА ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА НА СТРАНИЦАХ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ «БАЗМАВЕП»

В номере журнала «Базмавеп» за июль 1898 г. молодой ученый Гр. Ачарян касается тех образовательных учреждений, действующих во Франции и Германии, где преподавался также армянский язык. Лично принимая участие на этих уроках, Ачарян считает нужным представить свои впечатления об эффективности таких курсов, рассматривая цели и методы обучения. В этом смысле он сравнивает действующих в Париже два учреждения – Сорбоннский колледж высшего образования, где армянский преподавал великий арменовед арменовед Антуан Мейе, и Гимназию восточных языков, где преподавание армянского имело лишь формальный характер, курс вел имеющий смутное представление о предмете учитель по имени Карриер. Будучи в этой гимназии и проведя слушания уроков, Ачарян обнаружил многочисленные изъяны. После изучения проблем обучения армянскому в вышеуказанных заведениях, Ачарян считает нужным представить проблемы, касающиеся изучения армянского языка, также в Германии, которая считалась классической лингвистической страной – в этом смысле отдавая также дань преподающему армянский язык в Страсбургском университете великому ученому Хюбшману.